ՍՏԵՓԱՆԵԿԵՐՏ, 27 ՍԵՊՏԵՄԲԵՐԻ

Մարզում կյանքը նորոց դուրս է եկել նորմալ հունից: Վերջին 8 ամիսների ընթացքում այս էլ քանիերորդ անգամ: Երրորդ շաբաթն է չեն աշխատում գործարանները, մասամբ հասարակական տրանսպորտը, մի շարք հիմնարկ-ձեռնարկություններ, առն տրրական կազմակերպություններ: Լռություն է շինարարական և արտադրական հրապարակներում: 5-րդ օրն է պարենային ժամ է մտցված Լենինգրադում և Ադրբեջանական ՍՍՀ Ադդամի շրջանում: Արգելված են ցույցերը, միտինգները, երթերը, գործադուլները: Քաղաքում երթևեկությունը նոսրացել է, պարենային խանութները դատարկ կամ կիսադատարկ են, շուկա չի վաճառասեղանները՝ «մարտոր»: Փողոցում պարեկում են զինվորները, ստուգում անցորդների և վարորդների անցագրերը:

Իրադրությունը չափազանց լարված է, անհանգստացնող, տագնապալի: Անց են կացվում ժողովներ և խորհրդակցություններ: Ստեղծված իրադրությունից մարդիկ ելք են որոնում: Որն է ստեղծված իրադրությունից դուրս գալու ելքը,—այդ հարցը զբաղեցնում է բոլորին, կուսակցական և սովետական ղեկավար աշխատողից մինչև տնային տնտեսուհի: Մեր հատուկ թղթակից ՆՎԱՐԴ ՍՈՂՈՄՈՆՅԱՆԸ դիմել է տարբեր մարդկանց, որոնց պատասխանը տպագրում ենք ստորև:

ՎԱԼԵՐԻ ՍԼՈՒՏԻՆ— Շինանյութերի կոմբինատի մարմարի արտադրամասի պետ, մարզային կուսակցական կազմակերպությունն վերստուգիչ հանձնաժողովի անդամ:

Գրությունը մի կերպ նորմալացվում է, իսկ Ադրբեջանի ղեկավարությունը այն ապակայունացնելու ամենափոքր առիթն իսկ բաց չի թողնում: Այդպես ինչո՞վ բացատրել նման բարդ իրավիճակում հանրապետության դատավարության ստուգումները մարզում: Դա նրանց կողմից կանխամտածված քայլ է: Նման պայմաններում մենք ֆիզիկապես և հոգեպես ի վիճակի չենք աշխատելու:

ՀՐԱՆՏ ՀԱՄԲԱՐՁՈՒՄՅԱՆ— Կենցաղապատրաստման կոմբինատի բանվոր, ՍՄԿԿ անդամ:

Այնքան ենք կանգնելու, մինչև հասկանան մեր պրոբլեմը: Մինչև նրանք է շարունակվելու ձեռնամոտեցումը մեր հարցին:

ԱՐԱՅԻ ՀԱԿՈԲՅԱՆ— Ղարաբեթաքսկոմբինատի ղեկավարուհի:

Թող անջատեն, աշխատանքի գնանք: Կիրակի էլ կաշխատենք, տոն օրերին էլ, գիշերներն էլ:

ԱՐՄԵՆ ԳՐԻԳՈՐՅԱՆ— Աշխատանքի վետերան:

Ես դեմ եմ գործադուլին: Բայց կենսաբոնական հեռուստատեսությունը և մամուլը անընդհատ գործադուլի են հրահրում: Բացված վերջին աղ են ցանում: Այնպես էլ գիշերում են խոսում, որ լսողը ոչինչ չհասկանա:

ՎԼԱԴԻՄԻՐ ՍԱՐԳՍՅԱՆ— Շինանյութերի կոմբինատի կուսկազմակերպության քարտուղար:

Այո, գործադուլն էլ միջոց է: Իսկ դուք ի՞նչ կառաջարկեիք: Լցվել է համբերության բաժակը: Հենց ուզում ենք հունի մեջ մտնել՝ մի նոր պրովոկացիա, հրահրում: Բանվորներին համոզելու միջոցները ապառվել են: Աշխատանքի գնալուն ոչ ոք դեմ չէ:

ՌՈԶԱ ԳԱԲՐԻԵԼՅԱՆ— Անգլերենի ուսուցչուհի, ՍՄԿԿ անդամ: Մեր տանը մենք տանտեր չենք: Անպաշտպանության զգացում ունեն մարդիկ: Խոսքս Շուշիի մասին է: Չեմ մոռանա, թե ինչպես գիշերը զինվորների ուղեկցությամբ քաղաք մտան Շուշիից հալածված վերջին հայերը:

ԺԱՆՆԱ ԲԱԼԱՅԱՆ— Ռուսաց լեզվի և գրականության ուսուցչուհի, ՍՄԿԿ անդամ:

Երբ սովետական մանկավարժը դիմում է նստացույցի, ուրեմն ինչ-որ մի բան խաթարված է, սխալ է: Ծայրահեղ միջոց է, իհարկե, բայց ստիպված ենք եղել: Իսկ դասերը դպրոցում չպետք է ընդհատել: Նույնիսկ Մուսա լեռան պաշտպանության ժամանակ հայ երեխաք սովորել է:

ՅՈՒՐԻԿ ԴԱՎԹՅԱՆ— Էլեկտրատեխնիկական գործարանի բանվորուհի, քաղսովետի դեպուտատ:

Զարդված ավտոբուսներ, վրտանգավոր երթևեկություն, Շուշիից փախած հայեր, Շուշի «հաց զբրվանած» ադրբեջանցիներ: !

Ամեն օր մի վատ լուր: Ի՞նչ արդյունք աշխատենք: Հնալած գործադուլը միջոց չէ:

ԱՐԶԻԿ ՄԽԻԹԱՐՅԱՆ— Դասախոս, հոգեբանական գիտությունների թեկնածու:

Կիսատ-պռատ, մակերեսային որոշումներ, կիսատ-պռատ լուծումներ... Եթե հարցի արմատական լուծումն է:

ՆԱՎԱՍԱՐԴ ԳՐԻԳՈՐՅԱՆ— Աշխատանքի և Մեծ հայրենական հի վետերան, Կոշկի ֆաբրիկայի բանվոր:

Գործադուլը միջոց չէ: Ինքներս մեզ հենց վնասում: Ես գտնում եմ, որ աշխատելը անհրաժեշտ է: Եվ աշխատենք, և պայքարենք:

ՎԼԱԴԻՄԻՐ ԱԲՐԱՀԱՄՅԱՆ— Նոր գործարանի գլխավոր ինժեներ:

Նման լարվածությունը Ղարաբաղում, ես կասեի, ստեղծել է մեր հարցի լուծման ձգձգման պատճառով: Արդարացի լուծումից հետո, համոզված եմ, Ադրբեջանի ժողովուրդը ըմբռնողությամբ կվերաբերվի դրան: Խոսքս առանձին հրահրողների չի վերաբերում:

ՀԱՊԵՏԵՎ ՕՀԱՆՅԱՆ— Ավտոտրանսպորտի արտադրական միավորման վարորդ:

Գործադուլ:

Մինչև ոեալ գնահատական տրվի ԼՂԻՄ-ում և նրա շուրջ կատարվող իրադարձություններին:

ԱՐԱՄԱՅԻՍ ԱՌՍՏԱՄՅԱՆ— Մեխանիզացիայի և տրանսպորտի մասնագիտացված վարչության բանվոր:

Ղարաբաղցու նման աշխատավոր մարդու համար շատ դժվար է գործադուլ անելը: Բայց մեր բողոքը տեղ հասցնելու այլ ձև չեմ տեսնում: Գործադուլ՝ մինչև հարցի վերջնական լուծումը:

ԷԴՈՒԱՐԴ ՇԱՀԲԱՄԱՆՅԱՆ— № 91 շինվարչության պետ:

Խարում են ժողովրդին: Որոշումները մնում են թղթի վրա: Ո՞ւմ մեղքով: Հասկանալի է, Ադրբեջանի ղեկավարության: Գը նում ենք աշխատանքի՝ շինանյութ չկա, գնում ենք հետևից՝ վիրավորում են մեր ազգային արժանապատվությունը: Ճանապարհներին մեր «ընդդիմախոսները» քարով են տապիս, մերենները ջարդում: Իսկ Ադրբեջանի միջնորդությունից հեռագրեր ենք ստանում, իբր մեր կարարանում շինանյութերը չեն բեռնաթափվում: Բայց իրականում շինանյութ չկա: Ծանոթ ձեռագիր է: Այսպես մինչև ե՞րբ:

ՍՈՒՐԵՆ ՂԱՐԱԽԱՆՅԱՆ— Մեծ հայրենականի և աշխատանքի վետերան:

Գոնե մեր երիտասարդությունը տեսնի մեր պայքարի արդյունքը:

Անջատում:

ՌԱՖԱԼ ՄԻՐԶՈՅԱՆ— Ջուղայի կոմի:

Սկզբունքորեն դեմ եմ գործադուլին: Բայց ի՞նչ տրամադրությամբ աշխատենք: Ամբողջ կյանքում միայն աշխատել ենք, ոչ հանգիստ ենք ունեցել, ոչ դադար: Ասենք թե գնացինք աշխատանքի, հետո՞...

ՆԻԿՈԼԱՅ ԲԱԴԱՍԱՐՅԱՆ— Մարգծողկրթարանի տեսուչ, ՍՄԿԿ անդամ:

Ես դեմ եմ գործադուլին, վճռականապես մերժում եմ դատադուլը: Դա արդարությունը, քո ունեցած ճշմարտությունը ապացուցելու ձև չէ: Ամեն ինչ պետք է անել օրինականության սահմանների: Դրան կոչ է անում ՍՄԿԿ Կենտկոմի գլխավոր քարտուղար Մ. Ս. Գորբաչովը: Մենք պետք է մինչև վերջ լինենք հստակատակյամ և մինչև վերջ ու համբերությամբ բացատրենք ու ապացուցենք, որ արցախյան աշխարհի հայության պահանջը ճիշտ է, իսկ վերջին իրադարձությունները կոկին անգամ հաստատեցին, ու ԼՂԻՄ-ը պետք է դուրս բերել Ադրբեջանական ՍՍՀ-ի կազմից: Հարցը պետք է լուծել արմատական: Իսկ գործադուլը պետք չի: Բոլորս պետք է գնանք աշխատանքի: Միայն նորմալ պայմաններում է հնարավոր նորմալ լուծել պրոբլեմները:

ՏԱՏՅԱՆԱ ՍՈԲՈԼԵՎԱ— Կոշկի ֆաբրիկայի բանվորուհի, մարզ սովետի դեպուտատ:

Անհապաղ անջատում: Պահել հավատը կուսակցության՝ վերցրած նոր կուրսի նկատմամբ:

Խմբագրությունը տպագրելով ամենատարբեր մասնագիտության, զբաղմունքի, ամենատարբեր տարիքի մարդկանց կարծիքները, հավակնություն չունի ընդհանրացնելու այն: Պարզապես փորձ է արվել ներկայացնելու մարդկանց տրամադրությունը, ընտրելով պատասխանների ամենասեղմ ու հակիրճ ձևը, չնայած մարդկանց ասելիքը, հոգում կուտակածը շատ-շատ է: Մտքերի և հույզերի կիզակետում՝ ղարաբաղյան չլուծված պրոբլեմն է, անհանգստությունը և մտահոգությունը մեր լեռնաշխարհի, մեր երիտասարդության, մեր մանուկների վաղվա օրվա հանդեպ: Նշենք, որ մարդկանց մեծ մասը դեմ է գործադուլին, գտնում է, որ այն հարցը լուծելու միջոց չէ-և պետք է անպայման աշխատել:

Ինչպես հայտնի է, մարզում մտցվել է հատուկ դրություն: Անկարգությունները կանխելու, օրինականության խախտումներ թույլ չտալու ստիպողական այս միջոցառումը բնակչության կողմից ընդունվեց ըմբռնումով: Մասնայական ինֆորմացիայի միջոցների, գաղափարախոսական հիմնարկների ու ստեղծագործական միությունների ղեկավարների հետ ՍՄԿԿ Կենտկոմում կայացած հանդիպման ժամանակ Մ. Ս. Գորբաչովը ընդգծել է. «Մենք ընթանում ենք դեպի իրավական պետություն: Աշխատավորներին մենք պետք է պաշտպանենք: Այս դիալեկտիկան հարկավոր է տեսնել, ընկերներ: Եվ չէ որ դեմոկրատիան անպայման «օրինականություն է, պատասխանատվություն, կարգապահություն»:

Այս պահանջները հուշում են, որ պետք է վերադառնալ աշխատանքի, յուրաքանչյուրս իր վարքագծով, հասարակական, աշխատանքային գործունեությամբ ստեղծի այնպիսի նորմալ պայմաններ, որպեսզի կարիք չլինի հատուկ դրության շարունակելուն:

Տպագրելով մարդկանց կարծիքները, մենք մեր ընթերցողներին և առաջին հերթին՝ ստեփանակերտցիներին, հրավիրում ենք երկխոսության, որպեսզի կարողանանք գտնել այն ճանապարհը, որով հնարավոր լինի դուրս գալ մարզում ստեղծված դրությունից: